

ԲԱՆԱՎԵՆ ԵՎ ՔՆՆԱՐԿՈՒՄ



ՆՈՐԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԸՄԲՈՆՈՒՄԸ ԱՐԴԻ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ

Ա. Ռ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Հայտնի է, որ լեզվի համակարգում ամենաշարժունը բառապաշարն է, որտեղ շարունակ ընթացում են «համալրման» ու «բեռնաթափման» գործընթացներ՝ կապված հասարակական-քաղաքական, տնտեսական և այլ տեղաշարժերի հետ: Հենց բառապաշարն է, որ արտացոլում է տվյալ ժամանակաշրջանում մարդու կենսակերպը, մտածողության եղանակը և առհասարակ զարգացման աստիճանը:

Բառային կազմի համալրումը կատարվում է նորաբանությունների հաշվին, իսկ բեռնաթափումը՝ դրան հակադիր հնաբանությունների: Այս երկու փոխկապակցված և փոխլրացնող իրողություններով էլ պայմանավորված է բառապաշարի՝ որպես համակարգի զարգացումը: Սակայն այս խնդրի գիտական համակարգված ուսումնասիրությամբ լեզվաբանությունը փորձել է զբաղվել միայն անցյալ դարի 60-ական թվականներից, որն էլ պայմանավորեց բառագիտության մեջ նոր ոլորտի՝ նորաբանագիտության (НЕОЛОГИЯ)՝ նորաբանությունների մասին գիտության ի հայտ գալը: Հարկ է նշել, սակայն, որ հայ իրականության մեջ նորաբանությունները՝ որպես լեզվական իրողություն, առանձին համակողմանի ուսումնասիրության չեն ենթարկվել¹: Ինչ վերաբերում է նորաբանական բառարաններին, ապա նորագույն շրջանում հայ իրականության մեջ առաջին փորձը կատարել է Ֆ. Խլղաթյանը (Բառարան-տեղեկատու. նոր բառեր և իմաստներ, Եր., 1982 (շուրջ 1000 միավոր), այնուհետև՝ Փ. Մելթիխանյանը (Նոր բառերի բացատրական բառարան, Եր., 1996 (3000 միավոր), Ռ. Տեր-Մերկերյանը (Ուղեցույց. պա. Գ, Դ, Փարիզ, 1998, 2002) և Ս. Էլոյանը (Արդի հայերենի նորաբանությունների բառարան, Եր., 2002 (7715 միավոր): Սակայն, ի տարբերություն ուսերեն, անգլերեն, ֆրանսերեն և եվրոպական այլ լեզուներով հրատարակված (ընդ որում՝ ամենամյա) մանատիպ բառարանների՝ նշվածներից միայն Ռ. Մերկերյանին է որոշակիորեն բավարարում ընդունված չափանիշներին: Որո՞նք են դրանք: Օտար հրատարակությունների ուղղորդված նպատակը եղել է նորաբանական բառարաններում զետեղել առավելապես տերմինները, ընդ որում՝ ոչ նեղ

¹ Տե՛ս Հ. Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, Բ.2, Եր., 1951, էջ 482, Գ. Սևակ, Ժամանակակից հայոց լեզվի դասընթաց, Եր., 1955, էջ 142, Գ. Джаукян, Общее и армянское языкознание, Եր., 1978, էջ. Աղայան, Ընդհանուր և հայկական բառագիտություն, Եր., 1984, էջ 169-170, Ս. Մելքոնյան, Ակնարկներ հայոց լեզվի ոճաբանության, Եր., 1984, էջ 157-170, Պ. Պողոսյան, Խոսքի մշակույթի և ոճագիտության հարցեր, Եր., 1990, Ս. Էլոյան, Ժամանակակից հայերենի բառային ոճաբանություն, Եր., 1989, էջ 182, 207-232, Ա. Մարության, Նոր բառեր և նորաբանություններ, ԲԵՀ, № 3, 1998, էջ 77-85, Փ. Մելթիխանյան, Նորաբանության, նոր բառի և նոր իմաստի ըմբռնումը հայ լեզվաբանության մեջ, ՊԲՀ, № 3, 1990, էջ 48, Ա. Մարտիրոսյան, Հայերենի ռազմագիտական տերմինաբանության զարգացման այժմյան միտումները, «Հայկական բանակ», № 3, 2001, էջ 86-92, նույնի՝ Արդի հայերենի իմաստային նորաբանությունները, «Հայոց լեզու և գրականություն», № 3-4, 2002, էջ 61-66, նույնի՝ Նորակազմ իսկական բարդության մեկ մասնակադասարի քննություն, Ա.տ., № 1-2, 2003, էջ 60-64, նույնի՝ Ածանցավոր նորաբանությունների բառակազմական կադասարները ժամանակակից հայերենում, «Հայագիտության և գուգարական լեզվաբանության հարցեր», պրակ Գ, 2003, էջ 84-90 ևն:

մասնագիտական, այլ հասարակական-քաղաքականը, որոնք առավել հաճախադեպ են տվյալ փուլում հանրության տեղեկատվության բոլոր ոլորտներում: Օտար հրատարակությունների կառուցվածքը ևս հստակ է. առանձին բաժիններով ներկայացված են նոր բառերը, բառակապակցությունները, դարձվածքները, ինչպես նաև նոր իմաստները: Ինքնին հասկանալի է, որ մասնատիպ ամենամյա տեղեկատուները մեծապես կոյուրացնեին գոնե տասնամյակը մեկ նոր բացատրական բառարանի կազմման գործը: Նորաբանությունների բառարանների ուսումնասիրությունը ի ցույց է դնում հանրալեզվաբանական մի միտում ևս. երբ զանազան ոճերի ու հասարակության տարբեր սոցիոպրոֆեսիոնալ խմբավորումների խոսքային առանձնահատկությունների միջև վերանում են սահմանները: Հաճախ բառերը, փոխելով իրենց նշանակությունը, անցնում են ոճական այլ ոլորտ կամ դառնում են համագործածական: Սա վերաբերում է բառերին կամ բառակապակցություններին, որոնք գործածական են դառնում միաժամանակ մի քանի տերմինահամակարգերի համար, ինչպես նաև շատ կիսամոռացված բառերին՝ հնաբանություններին, որոնք դառնում են համալեզվական տարրեր: Բառապաշարը հարստանում է հատկապես հասարակաբանությունների ու ծածկալեզուների (արգոների) հաշվին:

Վ. Գակը, խոսելով ֆրանսիական նորաբանագիտության մասին, իրավացիորեն նշում է, որ ինչպես ֆրանսերենը, այնպես էլ եվրոպական մյուս լեզուները մեծապես օգտվել են նոր բառեր ստեղծելու հնարավորությունից: Ֆրանսիացի լեզվաբանների կարծիքով «ամենանեոգեն» ժամանակաշրջանը XX դարն է, հատկապես՝ նրա վերջին երեք տասնամյակը²: Հայերենի պարագայում «ամենանեոգեն» ժամանակաշրջանի սկիզբ կարելի է համարել անցյալ դարի 90-ականները, երբ մեր երկրում, ինչպես նաև նախկին Խորհրդային Միության ողջ տարածքում, տեղի ունեցան հասարակարգային արմատական փոփոխություններ, ձևավորվեցին նոր հանրային հարաբերություններ, նոր հասկացություններ... Ուստի պահանջ առաջացավ այդ **ամենը** անվանելու: Ինչպե՞ս, ի՞նչ անվանողական միջոցներով ու եղանակներով է լեզուն լուծում այս խնդիրը՝ բառապաշարի նորաբանական զարգացումը, ո՞րն է նորաբանության ընկալման չափանիշը:

Նորաբանագիտության կարևորագույն հիմնախնդիրներից է որոնել-գտնել նոր բառերի երևան գալու պատճառները, ինչպես նաև այն շարժիչ ուժերը, որոնք պայմանավորում են լեզվի բնական առաջընթացը: Սակայն այդ «նոր»-ը բնորոշելու որոնումները լեզվաբանական գրականության մեջ հաճախ հանգեցրել են տարբեր ըմբռումների: Դիտարկենք դրանցից մի քանիսը:

Այսպես, ոմանք նոր բառը դիտում են իբրև ոճաբանական կատեգորիա՝ բառի ընկալման մեջ կարևորելով «նորի զգացողությունը». ըստ այդմ՝ «նորաբանությունները բառեր են կամ արտահայտություններ, որոնց թարմությունն ու անսովորությունն ակնհայտորեն զգում են տվյալ լեզվակիրները»³ (հմմտ. լայլ-սան, ծրագրավորում, Աէպ): Ոմանք նորաբանություն են դիտում այն բառերը, որոնցով անվանվում են նոր իրակություններ՝ կապված գիտության, տեխնիկայի առաջընթացի հետ, որպես «... բառ կամ դարձվածք՝ ստեղծված (ծագած) նոր (նախկինում անհայտ) առարկա անվանելու կամ նոր հասկացություն արտահայտելու համար»⁴: Կամ՝ որպես «...նոր բառեր կամ նոր դարձվածային կապակցություններ, որոնք լեզու են մտել՝ պայմանավորված գիտության ու տեխնիկայի վերելքով, այլև հասարակական հարաբերությունների զարգացմամբ կամ

² St' u B. Г. Гак, О современной французской неологии, в кн.: "Новые слова и словари новых слов", Ленинград, 1978, էջ 37:

³ "БСЭ", М., 1974, т. 17.

⁴ О. С. Ахманова. Словарь лингвистических терминов. М., 1966.

փոփոխությամբ»⁵, կամ էլ՝ որպես «...նոր բառ կամ նոր իմաստով բառ՝ կապված գիտության զարգացման և նոր հասկացությունների ի հայտ գալու հետ»⁶, կամ «...նոր ժամանակներում հանդես եկած բառ կամ դարձված, որ կա՛մ դեռ համընդհանուր գործածություն չունի, կա՛մ գիտակցվում է իբրև նոր»⁷: Ակնհայտ է, որ բնորոշումներում նորաբանության ընկալման մեջ գերակայում է արտալեզվական գործոնը, այլև ոճականը՝ «նորի զգացողությունը»:

Թվում է, թե հիմնախնդիրը կարելի է հեշտ լուծելի համարել՝ հիմնվելով լեզվաբանական գրականության մեջ ընդունված այն տեսակետի վրա, որ բառապաշարային փոփոխություններն առավելապես պայմանավորված են արտալեզվական գործոններով: Անշուշտ այս դրույթը քննություն բռնում է, սակայն միշտ չէ որ բառապաշարային փոփոխություններն ուղղակիորեն կախված են արտալեզվական գործոններից: Որովհետև միշտ չէ որ նորը կյանքում պայմանավորված է լեզվում (առավել ևս գրական լեզվում) նոր բառերի ի հայտ գալով: Նոր իրակությունները կարող են անվանվել նաև հին բառերով ու բառերի կապակցություններով: Այս առումով առավել ճշգրիտ է նորաբանության մեկ այլ բնորոշում. «Նորաբանություն է կոչվում այն բառը, որը նոր է լեզու մուտք գործել և խոսողների կողմից ընկալվում է որպես նոր բառ՝ կապված հենց տվյալ ժողովրդի կյանքի ընթացիկ պահի հետ: Բառն այնքան ժամանակ է դիտվում նոր, քանի դեռ նրանում զգացվում է նորություն»⁸: Կարելի է նկատել, որ բնորոշման մեջ, անշուշտ, գերակայողը դարձյալ ոճական գործոնն է, սակայն այստեղ կարևորվում է նաև ժամանակի գործոնը: Հանդիպում ենք նաև այսպիսի բնորոշումների. «...ոչ միայն նոր, այլև շատ նոր, նոսր-նոր, բոլորովին վերջերս հայտնված բառ, որի թարմությունն ու նորությունը լինելն զգացվում են խոսողների կողմից»⁹: Կամ՝ «Նորաբանությունները ոչ միայն նորակազմություններ են (բառեր, բառերի նշանակություններ, արտահայտություններ), այլև ներթափանցումներ՝ ներքին ու արտաքին փոխառություններ՝ ժամանակային (վերականգնում, առկայացում (գործունացում) (կամ (և) տեղային (ներթափանցումներ բարբառներից, բանավոր խոսքից, ժարգոններից, հատուկ լեզուներից, այլ լեզուներից) առումներով»¹⁰:

Բնորոշումներից կարելի է եզրակացնել, որ նորաբանության ընկալման միակ չափանիշը լեզվակիրների՝ նորի, թարմության, անսովորության զգացողությունն է:

Ումանք էլ նորաբանություն են համարում ընդհանուր բառարանային գրանցում չունեցող բառերը: Անշուշտ, սա էլ թերի ընկալում է, որովհետև նորաբանություններ կարելի է համարել ինչպես բառարաններ պատահաբար սպրդած, այնպես էլ զանազան պատճառներով հեղինակների կողմից «մերժված» բառերը, ինչպես նաև էլզոտիզմները՝ տարաշխարհիկ բառերը, որոնք «անսովորության» չափանիշով կընդգրկվեն նոր բառերի շարքը: Եվ վերջապես, եթե բառարանային գրանցումով առաջնորդվենք, ապա նոր բառեր ընդհանրապես չեն լինի:

Ինչպես տեսանք, բնորոշումները տարարժեք են, որոնցում առկա է նորաբանության (լայն առումով) միակողմանի ընկալումը: Այս առումով տեղին է Բ. Գոլովիհի այն միտքը, որ «նորաբանություն հասկացությունը պատմական է ու հարաբերական»¹¹, և սա է հենց նրա առանձնահատկությունը: Նշանակում է, որ

⁵ «Энциклопедический словарь», М., 1954.

⁶ «Словарь терминов по информатике на русском и английском языках», М., 1971:

⁷ Ֆ. Խլիշյան, Ոճարանական քառաբան, Եր., 2000:

⁸ «Лексикология английского языка». Под ред. Н. Н. Амосовой. Ленинград, 1955, с. 136.

⁹ А. В. Калинин. Лексика русского языка. М., 1968, с. 116.

¹⁰ Н. З. Котелова. Словообразование без образования слов. В кн.: «Новые слова и словари новых слов». Ленинград, 1983, с. 71.

¹¹ Б. Н. Головин. Общее языкознание. М., 1966 с. 91.

նորաբանությունն ասվածը պետք է դիտարկվի համաժամանակյա ընկալման մեջ: Այս տեսակետից առավել համակողմանի բնորոշում է այն, որ նորաբանությունները «բառեր են, բառերի նշանակություններ կամ բառերի կապակցություններ, որոնք որոշակի ժամանակահատվածում ի հայտ են եկել որևէ լեզվում կամ կիրարկվել են մեկ անգամ (պոստենցիալ բառեր) ինչ-որ տեքստում կամ խոսողության գործընթացում»¹²:

Ուստի կարելի է ասել, որ նորաբանության ըմբռնման *առաջին* ճշգրտիչ գործոնը *ժամանակայինն* է: Երբ կատարվեց հեռուստատեսության գյուտը (անցյալ դարի 50-ական թթ.), նրա հետ առնչվող բոլոր բառերը նորաբանություն էին երեք-չորս տասնամյակ առաջ ստեղծվածների համեմատությամբ: Այսօր էլ նոր են այդ «հին» արմատատարրով բաղադրված *հեռուստաբանավեճ, հեռուստաքորուս, հեռուստախանութ, հեռուստակապուղի* ևն բառերը:

Հաջորդ ճշգրտիչ գործոնը բառի կիրարկելիության *լեզվական տարածքն* է, այսինքն՝ ո՞ր ոլորտներում ու ժանրերում է այն գործառում: Բանն այն է, որ տվյալ գրական լեզվի բառային կազմի փոփոխությունները պայմանավորված են բառապաշարի տարբեր շերտերի շարունակական ներթափանցումներով, և շատ կարևոր է, թե որտե՞ղ, ո՞ր շերտում է այն նոր դիտվում՝ ընդհանրապես լեզունե՞րո՞ւմ, տվյալ ազգային լեզվո՞ւմ, գրական լեզվո՞ւմ, տվյալ ենթալեզվո՞ւմ (նկատի ունենք, ասենք, վերջերս տարբեր տերմինահամակարգերում ի հայտ եկած այնպիսի բառեր, որոնք նոր են միայն տվյալ համակարգի համար, ինչպես՝ *իրակ* (մաթ.) < իրակություն (реалия), *բազմ* (մաթ.) < բազմություն (множество), *գլոր* (մաթ.) < գլորում (накат)¹³:

Ճշգրտիչ *հաջորդ* գործոնն է՝ պարզել, թե նորաբանությունն հասկացության մեջ *ի՞նչն է նորը*: Այս առումով հարկ է դիտարկել մեզանում գործառող *նորաբանություն* և *նորակազմություն* տերմինները, որոնք հաճախ միարժեք չեն սահմանվում կամ երբեմն նույնացվում են: *Նորաբանությունն* ավելի լայն ընդգրկում ունի, իսկ *նորակազմությունը* նրա մասնավոր դրսևորումներից է: Ի դեպ, օտար լեզուներում երկու տերմիններն էլ գործառում են, օրինակ՝ ռուս. неология և новообразование, անգլ. neologism և neology, ֆրանս. néologisme և néologie: Հայերեն *նորաբանություն* տերմինը փաստորեն ըմբռնվում է թե՛ իբրև неология, որը «գիտությունն է նորի մասին», թե՛ որպես неологизм՝ նորակազմություն, որը համարժեք է նաև новообразование-ին: Բանն այն է, որ լեզվաբանության մեջ ինչպես *նորաբանություն*, այնպես էլ *դիպլոմատիկ* և *պոստենցիալ բառեր* տերմինների մասին ցայսօր տիրապետող են տարբեր ըմբռնումներ: Լայն առումով նորաբանություն են լեզվում գործառող նոր իրողությունները: Նեղ առումով դրանք ղեզվի բառային համակարգի այն նոր միավորներն են, որոնք առաջացել են նոր առարկա անվանելու կամ նոր հասկացություն արտահայտելու հասարակական պահանջվունքից և գործառում են խոսքում որպես պատրաստի, վերարտադրելի միավորներ»¹⁴: Միասնական բնորոշման բացակայությունը հանգեցրել է

¹² «Лингвистический энциклопедический словарь», М., 1990:

¹³ Բառակազմական այս երևույթը նորմալի արժեք չունի հայերենի բառատեղծական ավանդույթում. դա արդեն առկա հասկացության (բառի) դիմաց նոր ձևի ստեղծումն է *ածանցի* (վերջածանցի) *կրճատումով* (ածանցագերծում), ինչպես՝ *վարանց* (մաթ.) < վարանցում (опускание), *սողանց* (մաթ.) < սողանցում (переползание), *ճախրանց* (մաթ.) < ճախրանցում (перелет) վերջերս ստեղծված տերմինները: Բերված օրինակները հետադարձ բառատեղծման (բառակազմության) (обратное словообразование) դրսևորումներից են՝ հետադարձ բառածանցում կամ ածանցագերծում (регрессивная деривация, дезаффиксация): Գործառական առումով սա հատուկ է առավելապես ժողովրդալիարկական ռինն (зонт < зонтик, сыроега < сыроежка):

¹⁴ В. В. Виноградов. Словообразование в его отношении к грамматике и лексикологии. В кн.: «Исследования по русской грамматике». М., 1975, с. 16-17.

նորաբանության չափանիշների սահմանման տարբերությանը: Այսպես, Վ. Գալը, գլխավորը համարելով ժամանակային չափանիշը, գտնում է, որ «նորաբանությունները այն նոր բառերն են, որոնք առաջանում են դրանք կիրարկող սերնդի հիշողության մեջ»¹⁵: Լ. Սախարնին, հիմնվելով նորակազմության՝ լեզու մուտք գործել-չգործելու հանգամանքի վրա, նշում է. որ «դրանք այնքան ժամանակ են միայն նորաբանություն համարվում, քանի դեռ լիովին չեն յուրացվել լեզվի կողմից ...»¹⁶: Բնորոշումն անորոշ է ու վերացական: Սա հաստատվում է հեղինակի մեկ այլ հարցադրմամբ. «...ի՞նչ են նոր բառերը լեզվում. որոնք դեռ չե՞ն հայտնվել. ուրեմն «բա՞ռ» է դա: Բառեր, որոնք «հայտնվել են», բայց շրջանառության մեջ դեռ չե՞ն մտել. ուրեմն դրանք դեռ լեզվի բառերը չեն: Բառեր, որոնք արդեն լեզու են մտել՝ ուրեմն կազմավորման առումով ինչո՞վ են այդ «նոր» բառերը տարբերվում «հներից» (էջ 18): Ա. Գորշկովի՝ նորաբանության ըմբռնումն ավելի լայն է. «Դրանք բառեր են, բառերի կամ կապակցությունների իմաստներ, որոնք որոշակի փոփոխում հայտնվել են որևէ լեզվում կամ մեկ անգամ գործածվել են (դիպլոմատիկ բառեր) որևէ տեքստում կամ բանավոր խոսքում»¹⁷: Նրա կարծիքով, միայն բովանդակային կամ ռեալական հատկանիշով նորաբանությունը բնորոշելիս չեն ներառվի բոլոր նոր բառերը, թերի կիսին մաս միայն բառարանում գրանցված լինելու հանգամանքով առաջնորդվելու մոտեցումը: Նորաբանության մասին առավել ամբողջական ենք համարում Ն. Կոտելովայի այն բնորոշումը, որտեղ մա «նոր բառեր» ասելով նկատի ունի «ինչպես այն բառերը, որոնք նոր են կազմավորվել կամ փոխառվել են այլ լեզուներից, այնպես էլ այն բառերը, որոնք նախկինում էլ ռուսաց լեզվում հայտնի են եղել, բայց կա՛մ սահմանափակ կիրառություն են ունեցել գրական լեզվի սահմաններից դուրս, կա՛մ որոշ ժամանակ դուրս են մնացել ակտիվ կիրառությունից և հիմա դարձել են համագործածական...այն ածանցյալ բառերը, որոնք ասես գոյություն են ունեցել լեզվում պոտենցիալ վիճակում և կազմավորվել են վաղուց կազմավորված բառերի հայտնի կադապարներից միայն վերջին տարիներին (վերջին տարիների գրավոր աղբյուրները դրանք պարզապես արձանագրում են)»¹⁸:

Ժամանակակից հայոց լեզվի նորակազմություններում մենք առանձնացնում ենք երկու կարգ՝ նորաբանություններ և դիպլոմատաբանություններ (օկազիոնալիզմներ. վերջիններս բառակազմական մակարդակում բաժանվում են պոտենցիալ և դիպլոմատային բառերի): Դիպլոմատաբանություններ տերմինը լայնորեն գործառվում է լեզվաբանական գրականության մեջ (անգլ. occasional word, ֆր. mot occasionnel, գերմ. okkasioneles Wort, իսպ. palabra ocasional), սակայն դիպլոմատային բառերի ընդհանրական սահմանում չկա: Այսպես, Ն. Ծանսկին դիպլոմատաբանությունները չի ճանաչում իբրև բառեր՝ հիմք ընդունելով դրանց անվերարտադրելիությունը. «Դրանք բառային ձևութամիացություններ են, որոնք գոյություն ունեն այն կամ այն համատեքստում որպես որոշակի նորմատիվ միավորներ և դրանով իսկ օժտված չեն լեզվական ստանդարտի ցանկացած միավորին բնորոշ հիմնական հատկությամբ՝ վերարտադրելիությամբ»¹⁹: Վ. Լոպատինն առանձնացնում է «դիպլոմատային և պոտենցիալ բառեր և դիպլոմատային բառեր, որոնք գոյություն չունեն լեզվական ավանդություն, հետևաբար այնպիսիք, որոնք ստեղծվում են բանավոր խոսքում, երբ մնացած բոլոր բառերը խոսողության

¹⁵ В. Г. Гак, *Աշվ. աշխ.*, էջ 90:

¹⁶ Л. В. Сахарный. К тайнам мысли и слова. М., 1983, с. 32.

¹⁷ А. И. Горшков. Неологизм. В кн.: "Русский язык: Энциклопедия". М., 1979, с. 131.

¹⁸ Н. З. Котелова, Ю. С. Сорокин. Предисловие. Новые слова и значения. В кн.: "Словарь-справочник по материалам прессы и литературы 60-х годов". М., 1971, с. 7.

¹⁹ Н. В. Шанский. Очерки по русскому словообразованию. М., 1968, с. 161.

ընթացքում վերստեղծվում, վերարտադրվում են որպես պատրաստի միավորներ»²⁰։

Մեզանում դիպվածային և պոտենցիալ բառերի խնդրին անդրադարձել է Թ. Ղարազոյլյանը²¹ դրանք քննելով հայոց լեզվի բառաստեղծական ընդհանուր գործընթացի տեսանկյունից։ Նա դիպվածային բառերը համարում է նորաբանություններ, սակայն տարբերում է բուն կամ համագործածական նորաբանություններից։ Կարծում է, որ «պատկանելով լեզվի կիրարկությանը, այսինքն՝ միայն խոսքին, դիպվածային բառերը հանդես են գալիս որպես *խոսքի* բառային միավորներ, բայց ոչ *լեզվի* և պայմանավորված են խոսքային տվյալ իրադրությամբ» (էջ 202)։ Տարբերում է 2 կարգի դիպվածայիններ՝ ա) որոնց կազմությունը թեև համապատասխանում է հայերենի բառակազմական կաղապարներին, սակայն կազմվել են բաղադրիչների անսովոր համադրությամբ (հմմտ. *սիրադու, տատենակաճ*), բ) որոնք կազմվում են հայերենի բառակազմական կաղապարներին անհամապատասխան ձևերով (արտակաղապարային բառեր) (հմմտ. *քեզապաշտներ, ամենամիակ*)։ Նրա կարծիքով, ամեն նորակազմություն նորաբանություն չէ, եթե չի անվանում նոր երևույթ (հմմտ. դեղի սրվակ → դեղասրվակ, վարձի չափ → վարձաչափ)։ Հավելենք, որ նման տարաբաժանումը պատճառաբանված կլինի միայն այն դեպքում, երբ տվյալ միավորները քննվեն բառակերտման համակարգում։ Պոտենցիալ բառերն ստեղծվում են արդյունավետ բառակազմական կաղապարներով, իսկ դիպվածայինները՝ նվազ արդյունավետ, անարդյունավետ, դիպվածային կաղապարներով։

Վերջին շրջանում լեզվաբանները հաճախ են անդրադառնում դիպվածային բառակերտման խնդիրներին և դիպվածաբանությունների առաջացմանը։ Այս առումով Եր. Զեմսկայան ուշագրավ մեկնաբանություն է տալիս XX դարավերջի լեզվի դիպվածային բառակերտման հիմնական միտումներին²²։ Դրանք են՝ 1) ժամանակակից բառակերտման մեջ նկատվում են նույն միտումները, որոնք ընդհանուր առմամբ բնորոշ են ժամանակակից ռուսաց լեզվի համար՝ անհատական վերաբերմունքի աճ, գնահատողական և քանակային (КВАНТИТАТИВНЫЙ) իմաստների դերի մեծացում, հարակից բառապաշարի տեղաշարժ դեպի հաղորդակցության կենտրոնական ոլորտներ, 2) անկաշկանդվածություն սահմանափակումներից, 3) հանգուցային բառերի՝ որպես բառակերտման բազային հիմքերի յուրահատուկ ակտիվություն, 4) գոյական հիմքերից սոցիալական ուղղվածության գոյականների կերտում, 5) ժամանակակից բառակերտման մարդակենտրոն լինելը, 6) անվանական նախածանցման մեծ ակտիվություն, 7) հապավումը դառնում է խոսքի արտահայտչամիջոցներից մեկը, 8) գոյական հիմքով հարաբերական ածականների բուռն կերպով ստեղծում, 9) բառակերտման հաճախականության տեսակետից բայերը երրորդ տեղում են (գոյականներից և ածականներից հետո)։

Այսպիսով, ինչպես տեսանք, նորաբանությունների մասին լեզվաբանության մեջ տիրապետող են տարբեր ըմբռնումներ։ Ի մի բերելով վերոնշյալը՝ մենք *նորաբանություն* ենք համարում լեզվում գործառող զանազան նոր երևույթները, ինչպես՝

1. Հին բառերին նոր որակներ հաղորդելը.

- ա) բառի տերմինացումը՝ *կառույց* (հս.-քղք.),
- բ) բառարաններում «հնգ.», «մսնգ.» հղումով բառերի թարմացումը կամ անցումը մեկ այլ տերմինահամակարգ՝ *գործատու, անհանգստություն* (հոգեբ. ... դվճատ.),

²⁰ В. В. Лопатин. Рождение слова: неологизмы и окказиональные образования. М., 1973, с. 70-71.

²¹ Տե՛ս Թ. Ղարազոյլյան, Դիպվածային և պոտենցիալ բառերը ժամանակակից հայերենի բառաստեղծական համակարգում, ԼՈՂ, թ. VII, Եր., 1983:

²² Տե՛ս Ե. А. Земская, Активные процессы современного словопроизводства, в кн.: "Русский язык конца 20-го столетия", М., 1996, էջ 47-51:

գ) բառերի խոսակցական շերտից անցումը ոճական չեզոք շերտ կամ հակա-
նակը՝ օպտիմալացում~որեն (գրք.),

դ) ոճական հականիշության առաջացումը՝ *իշխանություն-ընդդիմություն*.

2. Բառակերտման նոր միջոցները.

ա) անցումը բայական բառույթի վերլուծական կազմություններից համադ-
րականի՝ իրազեկ դարձել – *իրազեկել*,

բ) բառակապակցության բառայնացումը՝ լրիվ կամ լրացուցիչ կառուցվել >
լրակառուցվել, բնական պաշար > *բնապաշար*,

գ) բառակապակցության կրճատումը՝ երթուղային տաքսի > *երթուղային*,

դ) բայական բառակապակցությունից ... գոյական անցումը՝ հետ կանչել
(բայ) - *հետկանչ* (գոյ.),

ե) բառահատումը՝ մաթեմատիկա > *մաթեմ* (խսկց.), կոմպյուտեր > *կոմպ*
(խսկց.)²³:

3. Բառակազմական առկա կաղապարներով նոր բառերի ստեղծումը՝

ա) ածանցմամբ՝ գեր+խանութ > *գերխանութ*,

բ) բառաբարդմամբ՝ քայլ + արշավ > *քայլարշավ*, համակարգիչ + հեն > *հա-
մակարգչահեն*,

գ) հապավմամբ՝ զանգվածային լրատվամիջոցներ > *ՀԼՄ*։

4. Փոխառությունն ու պատճենումը՝ մարտավարություն, մենեջեր, տեսաֆո-
լովակ, մտածելակերպ (հմմտ. մենթալիտետ)²⁴։

Ամենևին հակված չլինելով սահմանել արտալեզվական և ներլեզվական
գործոնների տեսակարար կշիռը վերոնշյալ գործընթացներում՝ փաստենք, որ
արտալեզվական գործոնների դերն առավել տեսանելի է, քան ներլեզվականնե-
րինը։ Ներլեզվական գործոններով պայմանավորված՝ նորաբանությունները չեն
անվանում նոր առարկա կամ հասկացություն. նրանք կիրառվում են լեզվում ար-
դեն գործառող իրակություններն անվանելու համար, որոնք նախկինում անվան-
վել են կա՛մ նկարագրորեն (հմմտ. პროфилъ > կտրվածք (ուազմ.))՝ նախկին՝ *մար-
դու հասակով խորություն ունեցող խրամատ*-ի), կա՛մ լեզվում հայտնի առանձին
բառով (հմմտ. այր «պաշտոնյա» - այր «տղամարդ»)։ Ուստի նրանք պակաս նկա-
տելի են, իսկ հաճախ նաև դժվար հայտնաբերելի։ Հավանաբար լեզվի ներքին օ-
րենքների ուսումնասիրման բարդությունն է պատճառը, որ ներհամակարգային
գործընթացները, որպես կանոն, հայտնվում են ուսումնասիրողների տեսադաշ-
տից դուրս։

²³ Ռուսերենում, այդպես էլ եվրոպական մի շարք լեզուներում (իճպես՝ անգլերենում, ֆրանսերենում) հանդիպում է նաև *բառահատում* (усечение) երևույթը։ Սա բնորոշ է միայն գոյականներին, երբ հապավական եղանակով առանց ձևույթների սահմանազատ-
ման կատարվում է հիմք-բառի «հատում» (заменятель > зам, магнитофон > маг, рок-
н-ролл > рок)։ Անշուշտ սրանք ռուսերենի համար նույնպես փոխառյալ ձևեր են (անգլ.
doctor > doc, laboratory > lab, ֆրանս. examen > exam, sympatique > sympa), այդպես էլ հա-
լերենի համար տարբեր գործառական ոճերում մասնողության հիմունքով (մագնիտոֆոն
> մագ, ողբընող > ողբ, կենսաբանություն > կենսաբ)։

Սակայն նշենք, որ այս եղանակով ստեղծված (կամ ստեղծվող) կազմությունների
կիրառության ահմամը խիստ նեղ է, նրանք գործածական են միայն տվյալ տերմինահա-
մակարգում, այն էլ՝ վերապահումով։ Անշուշտ սա արդյունք է ոչ միայն հայերենում, այլև
բառաստեղծական տեխնիկայով հայերենին մասն լեզուներում (ռուսերենում, անգլերե-
նում) նկատվող ձևակազմիչ միավորների «տնտեսման» միտումին, ինչը վերջին շրջանում
առավել նկատելի է դարձել։

²⁴ Բառապաշարի նորաբանական զարգացման այս համատեքստում ուշագրավ են
Հայագիտական միջազգային համաժողովում Լ. Եզեկյանի կողմից առաջադրված դրույթ-
ները (տե՛ս Լ. Եզեկյան, Արդի արևելահայերենի բառապաշարի հարստացման ուղիները,
«Հայագիտական միջազգային համաժողովի դրույթներ», Եր., 2003, էջ 121-122)։

Նկատենք, որ ներհամակարգային նորակազմավորումները բազմազան են ինչպես իրենց բնույթով, այնպես էլ գործառության ինտեգրացիայի հատկանիշներով: Հարկ է նկատել նաև, որ լեզվի բառապաշարային ենթահամակարգի ներսում ընթացող ինքնակա գործընթացները, որոնք ուղղված են անվանողական համակարգի կատարելագործմանը, վերջին հաշվով միջնորդավորված են արտաքին ազդակներով, մասնավորապես՝ հասարակական նշանակության երևույթներին, հասկացություններին հնչեղություն հաղորդելով: Սա էլ առիթ է գործի դնելու լեզվական այն մեխանիզմը, որը ձգտում է արդեն հայտնի հասկացությանը հաղորդել լեզվական համակարգի տվյալ վիճակին հարմար նշանակություն, որը կհամապատասխանի նրա ժամանակակից զարգացման այս կամ այն միտումներին: Այսպիսով, արտաքին միտումները կարծես «ձևավորում են» ներլեզվական գործոնները:

Դիտարկենք լեզվի անվանողական համակարգի կատարելագործմանն ուղղված այն միտումները, որոնք նպաստում են նորաբանությունների երևան գալուն:

1. *Լեզվական համակարգի բառակազմական հնարավորությունների շնորհիվ բառային նորամուծությունների (հմմտ. նորակազմությունների, лексическая ИННОВАЦИЯ)* զգալի մասն ի հայտ է գալիս՝ վերանվանելու (ТРАНСНОМИНАЦИЯ) արդեն հայտնի հասկացությունները: Մինչ այդ նման նորակազմություններն ասես գոյություն են ունենում պոտենցիալ վիճակում: Այսպես, ունեցել ենք *միություն, շարժում, երթ, ընկերություն, աստղ, եզր* ևն բառերը, որոնք վերջին տասնամյակում տվեցին իրենց ածանցյալները՝ հարստացնելով մեր լեզվի բառային կազմը, ինչպես՝ *համամիություն* (հմմտ. կորպորացիա), *համաշարժում, համերթ, գեղընկերություն, գերաստղ, փոխեզր* ևն: Այսպիսով, ժամանակին ինքնուրույնություն ստացած այս կամ այն լեզվական միավորները հիմք են դառնում բառակազմական նոր շարքերի (կաղապարների) համար:

2. *Լեզվական տնտեսման²⁵* միտումը նոր լեզվական միավորների ստեղծման բավականին հզոր ներլեզվական գործոն է: Սրա էությունն այն է, որ խոսողության ընթացքում ընտրվում են հաղորդակցությունն ապահովող առավել արդյունավետ «կաղապարներ», երբ տնտեսվում է տպագիր արտադրանքի տարածքի ու բանավոր հաղորդման տևողությունը: Նշվածի վառ արտահայտությունն է կայուն բառակապակցությունների կրճատում-փոխարինումը միաբառ, ձևով առավել հակիրճ անվանմամբ, որը նոր չէ, օրինակ, հայերենի բառակերտման օրինաչափությունների մեջ (տե՛ս և հմմտ. հեծյալ գորք > հեծելագոր, թիկնապահ գորք > թիկնագոր), ինչպես՝ զինված ուժեր > *զինուժ* (ռազմ.), պատճենահանող սարք > *պատճենասարք* (տեխն.), լրացուցիչ վճար > *լրավճար* (տնտսգ.), գլորումով քայլ > *գլորաքայլ* (մարզ.) ևն:

Լայնորեն կիրառվում է նաև լեզվական միավորների տնտեսման բառատեղծական մեկ այլ երևույթ՝ *հասպավումը*, որի շնորհիվ զգալիորեն ընդարձակվում է ներհամակարգային նորակազմությունների քանակը: Թեև հասպավական բաղադրությունների անվանողական արտահայտչականությունը հաճախ զիջում է նույն հասկացության բառային անվանմանը, բայց և այնպես կրճատում է խոսքային նշանների «տարածքը»: Հասպավական բաղադրություններով (հատկապես՝ տառային ու վանկաբառային) հարուստ է մասնավանդ վերջին տասնամյակի լեզուն, ինչպես՝ *ՄԱԱ* (մամուլի ազգային ակումբ), *ՓԲԸ* (փակ բաժնետիրական ընկերություն), *ԴՈՒԾ* (դաշնադրային ուժերի շտաբ), *արտգործնախարար*, ~ություն, *ֆինանսխարար*, ~ություն ևն:

Լեզվական միավորների տնտեսման միտումն առկա է նաև *փոխառությունների* պարագայում: Այս դեպքում փոխառման գործընթացն իրականացվում է

²⁵ Տերմինը պատկանում է անվանի լեզվաբան Օ. Եսպերեսին, իսկ Ա. Մարտինեն երևույթն անվանում է «լեզվական քանքերի տնտեսման օրենք»:

Քանի որ թե տվյալ լեզվի համար նոր իրականություններն անվանելու համար, այլ առավել արդյունավետ՝ տնտեսված ձևով արտահայտելու այս կամ այն արդեն հայտնի հասկացությունը: Այս տեսակետից փորձենք համեմատել արդեն առկա նկարագրական կադապարները համարժեք փոխառյալ ձևերի հետ: Այսպես՝ *տանդեմ* - «գաղափարական, քաղաքական և այլ միասնություն», *դոնոր* - «մատակարար» (տե՛ս դոնոր երկրներ) ...որի նպատակն է ձևավորել մշակութային ոլորտի զարգացմանն ուղղված ծրագրեր և կազմակերպել *դոնոր* երկրների համաժողով («Ազգ», մարտ, 2001), *չիպս* - «կարտոֆիլի տապակած շերտիկներ», *էքսպո* - «համաշխարհային ցուցահանդես»՝ Այս կարծիքն են կազմում «Հայաստան *էքսպո-2003*» ցուցահանդեսի տաղավարներով շրջելիս («Եթեր», 23.09.2003) և: Փաստորեն կատարվում է *իմաստային վերափոխում* (семантическая трансформация)՝ շնորհիվ իմաստի խտացման: Այսպիսով, հաղորդակցման գործընթացը տնտեսելու նպատակով որևէ հասկացության վերանվանումն իրականացվում է ոչ միայն նոր բառերի, այլև լեզվում արդեն գործառող բառայինների նոր նշանակություններ հաղորդելու միջոցով: Բառային «մասնատվածության» հատվածայնության վերացումը հանգեցնում է մեկ բառի սահմաններում իմաստային բովանդակության խտացմանը, և սկսում է աշխատել լեզվական անխախտ մեխանիզմը՝ ստեղծելով ձևի ու բովանդակության միասնականություն: Եվ նոր բովանդակության ու հին ձևի միջև առկա հակադրությունը լուծվում է հոգուտ նոր բովանդակության՝ իմաստի: Ի դեպ՝ այս գործընթացը, որոշ լեզվաբանների (Ս.Վոլկով, Եր. Սենկո) կարծիքով, հանգեցնում է խոսակցական ու մասնագիտական բառապաշարում իմաստաբանական մի իրողության, որին մենք տվել ենք *բառ – ձուլույթներ* (слова-универбаты) անվանումը: Սա, ըստ էության, բառի՝ հասկացության համառոտ ոչ պաշտոնական անվանումն է, որը պաշտոնական խոսքում հանդես է գալիս ածական + գոյական կամ գոյական + գոյական կապակցությամբ, ինչպես՝ *երթուղային* < երթուղային տաքսի, *ուժային*, ~ներ < ուժային նախարարություն կամ այդ կառույցի աշխատակից, *գործադիր* < գործադիր մարմին, ~իշխանություն, *ատուլիս* < մամուլի ատուլիս, *վերաքաղ* < գիտելիքների վերաքաղ (տե՛ս կրկնողություն. հատուկ է հոգևոր կրթօջախների բառապաշարին), *շարժում* < հայոց համազգային շարժում (տե՛ս *շարժման* տարիներ, ~ մասնակից), *եռօրյա* < եռօրյա միտ՝ Վեցերորդ արձանագրության վավերացումը Աժ առաջին *եռօրյայի* օրակարգում... («Արմենպրես», 5.09.2003) և:

Այս երևույթը կայունանում է նաև բաղադրյալ անվանումներում, ինչպես՝ Երկրապահ կամավորականների միություն~ (անդամ) < *երկրապահ*, Արդարություն դաշինք < *Արդարություն* «*Արդարությունը*» նախընտրեց ընդհանրապես չմասնակցել քվեարկությանը, և այդ բոլորտին միացան նաև որոշ *երկրապահներ*՝ Հակոբ Հակոբյանը, Հրանտ Գրիգորյանը («Ազգ», 9.09.2003):

Իմաստային ձուլումը (КОНТРАКЦИЯ) գործնականում ընկալելի է խոսող-խոսակից հակադրամիասնության տեսակետից, ըստ որի լեզվի զարգացումն ընթացում է մեկ հոգուտ խոսողի, որը ձգտում է պարզեցնել ասելիքը, մեկ՝ խոսակցի, որի համար էական է ասելիքի դյուրընկալությունը: Հավելենք, որ *բառ-ձուլույթները* էական դեր են խաղում ժամանակակից խոսակցական լեզվում, ինչպես նաև մամուլի ու հրապարակախոսության բնագավառում, այսինքն՝ խոսքային հաղորդակցության այն ոճերում, որտեղ սեղմ շարադրանքի կարիքը խիստ զգալի է:

Իմաստաբանական այս իրողությանն արտահայտման ձևով մեզն է *փոխանունությունը* (մետոնիմիա): «...փոխանունությունը լրացյալի արտահայտումն է լրացումով»* (հմտ. մի գավաթ սուրճ խմեց – մի գավաթ խմեց): Ըստ էության

* Տե՛ս Էդ. Աղայան, Բառագիտություն, «Հայոց լեզու», Ի մաս, պրակ Ա, Եր., 1980, էջ 227-229:

երկու դեպքում էլ գործ ունենք բառակապակցության համառոտման, բառակապակցություն → բառ անցման իրողության հետ: Սակայն, կարծում ենք, մեանությունն առկա է զուտ արտահայտչական առումով: Նախ՝ առաջին դեպքում գործ ունենք կայուն բառակապակցության հետ (հմտ. երթուղային տաքսի), երկրորդում՝ ազատ (հմտ. մի գավաթ սուրճ): Այս հանգամանքն էլ հենց ցույց է տալիս, որ առկա են տարբեր իրողություններ. որովհետև *երթուղային* ասելով՝ հաստատապես ըմբռնում ենք *երթուղային տաքսի*-ն, իսկ *մի գավաթ* -ի պարագայում կրճատված մասը կըմբռնվի միայն համատեքստում: Ուստի իմաստային վերափոխման՝ ձուլման այս երկու դրսևորումները նույնական են արտահայտության առումով, սակայն տարբեր՝ բովանդակային:

3. Նոր երևույթ չանվանող նորաբանությունների ի հայտ գալուն նպաստում է նաև *ընդհանրացման միտումը*²⁷ միանման երևույթներից, առարկաներից, հասկացություններից ընդհանուր անվանում տալու ձգտումը: Այսպես, պատկերն ու ձայնը ձայնագրելու զանազան սարքերից՝ *տեսախցիկ*, *ձայնագրիչ*, *տեսամագնիտոֆոն* ևն, տրվել է *տեսատեխնիկա* ընդհանրացնող անվանումը, հարդարանքի առարկաներին ու միջոցներին՝ *կոմպետիկա*, իշխանության ոչ գործադիր մարմիններին՝ հասարակական, արհմիութենական կազմակերպություններին՝ *ոչ կառավարական*, ~պաշտոնական ընդհանրացնող անվանումը, լոգարանն ու զուգարանը՝ *սանհանգույց*, դրանք նորոգելու, ձևավորելու սարքերին՝ *սանտեխնիկա* ևն: Փաստորեն ընդհանրացման միտումն առկա է ոչ միայն բառային, այլև իմաստային պլանում: Այս առումով Դ. Օմելյովը Աշում է, որ իմաստային ընդհանրացումը տվյալ դեպքում արտահայտվում է նրանով, որ ստեղծվում են անվանումներ, որոնք հանդես են գալիս որպես իմաստային դաշտի այս կամ այն բառաիմաստային հարացույցի տեսակային հասկացությունները տարբերակված իմաստներով համաչափորեն հատվածավորելու ընդհանրական բազմապատկիչներ²⁷:

Հարկ է Աշել, որ իմաստային նորամոծությունների քննվող տեսակը վերըստին փաստում է լեզվի զարգացման այն ընդհանուր օրենքը՝ վերացարկելիությունը, որի համաձայն՝ լեզվի համակարգի նույն, առավել կոնկրետ տարրերի հիման վրա զարգանում են մյուսները, նվազ կոնկրետ տարրերը:

4. Կանոնավորման, ընդհանրացման միտումին հակակշռում է, գործառում է նաև *տարբերակման* (дифференциация), *ճշգրտման* միտումը, որը դրսևորվում է՝ ա) երբ լեզվի զարգացման տվյալ փուլում նույնանիշները ձեռք են բերում իմաստի և կիրառության նրբին տարբերություններ՝ վերածվելով տերմինային հոմանիշների (հմտ. *խումբ-խմբակցություն*, *հասարակություն*, *հասարակական-հանրություն*, *հանրային*) և բ) երբ նույն հասկացության դիմաց վերանում կամ ճշգրտվում է տերմինային հոմանիշությունը՝ երբեմն այդ շարքը համալրելով նորակազմ տերմիններով (հմտ. պրոցեդուրա - 1. *ընթացակարգ* (քղք.), 2. *արարողակարգ* (հս.-քղք.), 3. *բուժակարգ* (բժշկ.):

Տարբերակման, ճշգրտման՝ որպես նորաբանությունների առաջացման այս միտումի մասին ուշագրավ դիտարկում ունեն ռուս լեզվաբաններ Ս. Վոլկովը և Եր. Սենկոն²⁸: Նրանք կարծում են, որ եթե կանոնավորման, ընդհանրացման միտումն ունի տեսակ → սեռ (виды → род) ուղղվածությունը, ապա տարբերակման, ճշգրտման միտումը՝ սեռ → տեսակ (род → виды)՝ իմաստային դաշտի ներսում որոշակի ստորակարգություն սահմանելու, մյուս կողմից՝ հարկ եղած դեպքում այս կամ այն սեռի յուրաքանչյուր տեսակին առանձին անվանում տալու և դրանով իսկ սահմանելու տրամաբանական սեռատեսակային հարաբերություններ:

²⁷ Տե՛ս Դ. Н. Шмелев, О некоторых тенденциях развития современной русской лексики, в кн.: "Развитие лексики современного русского языка", М., 1965, էջ 11:

²⁸ Հմտ. С. С. Волков, Е. В. Сенько, Неологизмы и внутренние стимулы языкового развития, в кн.: "Новые слова и словари новых слов", Ленинград, 1983, էջ 52-53:

Սա հանգեցնում է նոր բառերի, առավելապես բարդ բառերի ստեղծմանը, որոնք ճշգրտում են արդեն առկա ընդհանուր հասկացությունները (հմմտ. *Выставка* > *выставка-смотр, выставка-ярмарка, выставка-продажа, парк* > *геопарк, гидропарк, парк-выставка*): Նույնպիսի բառակազմական կաղապարներ ձևավորվել են նաև մեզանում, հատկապես վերջին երկու տասնամյակում, ինչպես՝ *Բժիշկ > բժիշկ-կենսաբան, բժիշկ-վարակազետ, Դիմում > դիմում-բողոք, դիմում-գանձատ, ինտերնետ-սրճարան, խանութ-սրահ, տուն-ինտերնատ* ևն: Նման կազմությունները լեզվաբանական գրականության մեջ նաև կոչում են *բիմոմներ*²⁹ երկու անվանման կազմավորումներ (հմմտ. ֆրանս. *bloc-cau* «սանհանգույց», *bloc-fumeur* «մոխրաման և հրահան ավտոմեքենայում», *diner-débat* «ճաշ-քննարկում», *billet-cadeau* «տոմս-նվեր», ռուս. *кран-манипулятор, команда-жест, парк-выставка*): Բիմոմներում բաղադրիչների սերտաճման աստիճանը տարբեր է. հաճախ նրանց շարահյուսական համարժեքը բացահայտիչ-բացահայտյալ բառակապակցությունն է, սակայն երբեմն բիմոմը բառայնացվում է՝ վերածվելով բարդ բառի: Ընդ որում, բիմոմի առաջնաբաղադրիչը կամ վերջնաբաղադրիչը սկսում են լայնորեն համադրվել այլ բառերի հետ՝ ստեղծելով արդյունավետ կաղապարներ (հմմտ. *դիմում-բողոք, դիմում-գանձատ, դիմում-կոչ, դիմում-նամակ, ֆրանս. livre-cadeau* «գիրք-նվեր», *papier-cadeau* «թուղթ-փաթեթ»): Որոշ լեզվաբաններ (մասնավորապես՝ Պ. Ժիլբերը) այս իրողությունը բացատրում են այն հանգամանքով, որ բիմոմի բաղադրիչներից մեկը վերացարկվում է և հարմարեցվում նախածանցի կամ վերջածանցի դեր կատարելուն: Պ. Ժիլբերը նման առաջնաբաղադրիչներն անվանում է «նախածանցակերպներ» կամ «կեղծ նախածանցներ», իսկ վերջնաբաղադրիչները՝ «վերջածանցակերպներ» կամ «կեղծ վերջածանցներ»³⁰: Հարկ է նշել, որ բառակազմական նման կաղապարների առաջացման անհրաժեշտությունը պայմանավորվել է գիտության, տեխնիկայի, արտադրության զանազան ոլորտների մասնագիտացմամբ, հանգամանք, որն էլ առիթ է հանդիսացել երևույթի, գործողության, մասնագիտության ևն ընդհանրական անվանումը (հմմտ. *բժիշկ* կամ *կենսաբան*) փոխարինելու առանձին՝ ճշգրտված անվանմամբ (հմմտ. *բժիշկ-կենսաբան*):

5. Նորաբանությունների առաջացման ներքին ազդակներից է նաև արդեն հայտնի երևույթներին *հուզարտահայտչականություն հաղորդելը* ինչպես սեփական, այնպես էլ փոխառյալ կամ պատճենյալ բառերով: Հաղորդակցման գործընթացի մասնակիցները հաճախ ձգտում են արդեն հայտնի բառերի իմաստային դաշտը հարստացնել փոխաբերական – ընդհանրացնող նշանակություններով, որը խոսքին հաղորդում է թարմություն ու արտահայտչականություն: Այդպիսիք են, օրինակ, տարբեր փուլերում ի հայտ եկած բառերը, ինչպես՝ *բջիջ* – «կուսակցության փոքրագույն միավորը», *գարկերակ* – «կենսական օղակ, միտում, տեմպ, ռիթմ» (դարի~, կյանքի~), *մարաթոն* – «որևէ բանի տևական ընթացք» (ընտրական~), *ուղեգիր* – «ինչ-որ մեկի կամ ինչ-որ բանի համար հետագա զարգացումն ուղեմշող հանգամանք» (կյանքի~), *հասարակած* – «ինչ-որ բանի կենտրոնը, սահմանը նրա տևականության տեսակետից» (հատել~, անցնել~), *բուս* – «ինչ-որ բանի կտրուկ զարգացում» (տնտեսական~, տուրիստական~, գրքի~), այդպես էլ կայուն բառակապակցությունները, ինչպես՝ *հելսինկյան ոգի*, ~ով – «միջազգային լարվածության թուլացման, ժողովուրդների բարեկամությունը բնութագրող բարոյական մթնոլորտ», *ՑՑ-ի ոգի*, ~ով – «1988 թ. արցախյան ազատագրական շարժման տարիներին թևածող բարոյաբուժաբանական մթնոլորտ»³⁰, *աստեղային ժամ*

²⁹ Տե՛ս P. Gilbert, *Dictionnaire des mots nouveaux*, Paris, 1971:

³⁰ Այստեղ առկա է նաև իմաստային ձուլումը (հմմտ. *հելսինկյան* (~ոգի) – «Հելսինկիի խաղաղության համաձայնագրի անդամ-երկրներ», *ՑՑ-ի* (~ոգի) – «1988-ից ծայր առած հայոց համազգային՝ արցախյան շարժում»):

- «ինչ-որ մեկի, ~բանի նվաճումների, հաջողությունների բարձրակետ» են:

Խոսքն առավել արտահայտիչ դարձնելու, նրան բազմազանություն հաղորդելու մղումը նպաստում է բառապաշարում հոմանիշային շարքերի շարունակական ընդարձակմանը ինչպես սեփական, այնպես էլ *փոխառյալ անվանողական միջոցներով*: Այսպես, բարելավում, ~ել բառի հոմանիշային շարքի գործուն անդամ դարձավ *օպտիմալացում* < ОПТИМИЗАЦИЯ փոխառությունը (հմմտ. կրթական համակարգի~ դպրոցների *օպտիմալացում*), որը արձանագրված էր մեր բառարաններում որպես գրքային ոճի բառ (հմմտ. օպտիմալ, ~որեն, ~ություն), իսկ այսօր նրա նորաբանական կիրառությունը պայմանավորված է խոսքին առավել ազդեցիկություն հաղորդելու հանգամանքով: Կամ՝ դաշինք, դաշնադրում ... *կոալիցիա* < КОАЛИЦИЯ՝ Ծրագրի մեջ ներառված է *կոալիցիա* կազմած կուսակցությունների առաջարկությունների մեծ մասը («Արմենպրես», 17.06.2003), կաշառակերություն ... *կորուպցիա* < КОРРУПЦИЯ՝ Կուստատսովի *հակակոռուպցիոն* ծրագիրը, որտեղ կառավարությունը հիմքը դնում է օրենսդրական դաշտի կարգավորման վրա.... («Արմենպրես», 17.06.2003), օրինական ... *լեգիտիմ* < ЛЕГИТИМНЫЙ՝իշխանությունը իրականում պարտվել է, *լեգիտիմ* չէ ... («Օրբան», 20.06.2003):

Բառերի նման պատկերավոր վերափոխառվածությունները, թվում է, խախտում են լեզվական համակարգի կանոնավորությունը, բայց և այնպես նրանց հայտնվելը բառապաշարում օրինաչափ է և օբյեկտիվ՝ կապված լեզվական մեխանիզմի արտահայտչական գործառույթի հետ:

Այսպիսով, քննությունից հանգում ենք այն համոզման, որ նորաբանությունների ի հայտ գալը պայմանավորված է ոչ միայն արտալեզվական գործոններով, և նորաբանականը միայն նոր երևութների, իրողությունների (նեղ առումով) արտացոլումը չէ: Նորաբանության ըմբռնման հարցում պետք է հաշվի առնել ինչպես *ժամանակային*, այնպես էլ բառի կիրառելիության *լեզվական տարածքի* գործոնները: Լայն առումով նորաբանություն են լեզվում գործառող նոր իրողությունները, ինչպես՝ *հին բառերին նոր որակներ հաղորդելը, բառակերտման նոր միջոցները, բառակազմական առկա կաղապարներով նոր բառերի ստեղծումը, փոխառությունն ու պատճենումը*: Նորաբանությունների երևան գալուն նպաստում են *արդեն հայտնի հասկացությունները վերանվանելու, լեզվական տնտեսման, ընդհանրացման, տարրերակման*, ինչպես նաև դրանց *հուզարտահայտչականություն հաղորդելու* միտումները:

А. Р. МАРТИРОСЯН - Понимание неологизма в современном армянском языке . - В статье рассматриваются существующие в современной лингвистике дефиниции неологизма, дается взгляд автора на эту проблему.

Говоря о неологизме, нужно учитывать временной фактор и фактор языкового пространства, в котором функционирует данное слово. В широком понимании неологизм — это функционирующее в языке новое явление, передача новых свойств старым словам, новые способы словообразования, создание новых слов с помощью существующих словообразовательных форм, заимствования и кальки. Возникновению неологизмов способствует несколько тенденций — это трансноминация уже известных понятий, а также принцип языковой экономии, обобщений, дифференциация и придание словам экспрессивно-эмоциональной окраски.